# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**29 մայիսի 2025 թվականի № 191-Ա**

## ՀԱՅԿ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԵՎ ՍՏԵՓԱՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2335-Ն որոշման № 1 հավելվածի 3-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի մայիսի 8-ի № ԴԽ/17.3/15357-2025 գրությունը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ *Հայկ Մկրտչյանին* և մարզպետի խորհրդական *Ստեփան Բաղդասարյանին* 2025 թվականի հունիսի 1-ից 3-ը ներառյալ, երեք օրով, գործուղել քաղաք Գորիս՝ Հայաստան-Ֆրանսիա ապակենտրոնացված համագործակցության 5-րդ համաժողովին մասնակցելու համար:

2. *Հայկ Մկրտչյանի և Ստեփան Բաղդասարյանի* գործուղման վայր փոխադրումը կատարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի հաշվեկշռում գտնվող *«TOYOTA LAND CRUISER PRADO 2.7 l»* մակնիշի *827 CZ 61* ավտոմեքենայով:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը *(հաշվապահական հաշվառման բաժնին)* գործուղման հետ կապված ծախսերը *(օրապահիկ և գիշերավարձ)* կատարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի պահպանման ծախսերում գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին, ինչպես նաև գործուղման ժամանակահատվածում ընդգրկված հանգստյան օրվա համար վարձատրել Աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

**2025 թվականի մայիսի 29**
**ք. Հրազդան**

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ